



# ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՑԻ

Բարեկանուա Յիսուսի Պաշտ  
21 Նոյեմբեր 2021

### ԸՆԹԵՐՑՈՒՄ ՄԱՂԱՄԻԱ ՄԱՐԴԱՐԵՒ ԳԻՐՔԵՆ (3.1-2)

**S**էր Աստուած այսպէս կ'ըսէ. - «Ահա ես իմ պատգամաքերս կը դրկեմ որպէսզի ինձի համար ճամբայ պատրաստէ: Եւ ապա Տէրը յանկարծ իր տաճարը պիտի գայ. այն Տէրը որ դուք կը փնտոէք, ան՝ որ իմ Ուխտիս աւետարերն է եւ որուն կը սպասէք, ահա արդէն կու գայ», - կ'ըսէ Ամենակալ Տէրը:

Անոր Գալուստին օրը ո՞վ պիտի դիմանայ, ո՞վ պիտի կարենայ կանգուն մնալ երբ անիկա յայտնուի. որովհետեւ անիկա պիտի գայ քուրայի կրակին պէս, լուացարարներու օճառին նման:

### ՊՕՂՈՍ ԱՌԱՎԵԱԼԻ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԵՆ (6.16-7.1)

**Ա**րդարեւ մենք ենք կենդանի Աստուծոյ տաճարը, ինչպէս Աստուած ինք ըսաւ.

«Անոնց մէջ պիտի բնակիմ եւ անոնց հետ պիտի ապրիմ: Ես իրենց Աստուածը պիտի ըլլամ եւ անոնք իմ

ժողովուրդս»:

Ահա թէ ինչո՞ւ Աստուած կը հրահանգէ մեզի.

«Անջատ եւ հեռու կեցէք հեթանոսներէն. պիղծ բաներու մի՛ դպչիք, եւ ես ձեզ պիտի ընդունիմ: Ես ձեզի հայր պիտի ըլլամ եւ դուք իմ տղաքս եւ աղջիկներս պիտի ըլլաք, - կ'ըսէ Ամենակալ Տէրը»:

Սիրելիներ, այս խոստումները մեզի՛ եղած են: Ուստի հեռու մնանք մարմնական եւ հոգեկան ամէն պղծութենէ, մենք մեզ կատարելապէս մաքրենք՝ Աստուծոյ երկիւղովը ապրելով:

### ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ ԸՍ ՂՈՒԿԱՍԻ

(1.39-56)

**Ն**ոյն օրերուն, Մարիամ ճամբայ ելլելով՝ աճապարանքով գնաց Յուդայի լեռնային շրջանի քաղաքներէն մէկը: Հոն Զաքարիայի տունը մտնելով՝ Եղիսաբէթի ողջոյն տուաւ: Երբ Եղիսաբէթ Մարիամի ողջոյնը լսեց, իր որովայնին մէջ երեխան շարժեցաւ, եւ Եղիսաբէթ Սուլք Հոգիով ներշնչուած՝ բարձրածայն ըսաւ.

- Կիներուն մէջ օրհնեա՛լ ես դուն  
եւ օրհնեա՛լ է զաւակը որ կը կրես  
որովայնիդ մէջ: Ի՞նչ երջանկութիւն,  
որ Տիրոջս մայրը ինծի կ'այցելէ.  
որովհետեւ երբ ողջոյնդ լսեցի, երեխաս  
ուրախութեամբ շարժեցաւ որովայնիս  
մէջ: Երանի՛ քեզի որ հաւատացիր,  
որովհետեւ Աստուծոյ կողմէ քեզի  
ըսուածները պիտի կատարուին:

### **Մարիամ ըսաւ.**

«Տէրը պիտի գովաբանեմ. ահա  
հոգիս կ'ուրախանայ Աստուծմով, իմ  
Փրկիչովս, որովհետեւ ան տեսաւ իր  
աղախինին հեզութիւնը: Ասկէ ետք  
բոլոր սերունդները երանի պիտի տան  
ինծի, քանի հզօրն Աստուած ինծի  
համար մեծամեծ գործեր կատարեց.  
սուրբ է անունը անոր: Բոլոր  
ժամանակներուն մէջ ողորմութեամբ  
ան կը նայի աստուածավախ մարդոց  
վրայ: Իր բազուկով ան զօրութիւն  
ցոյց տուաւ, ոչնչացուց հպարտները՝  
իրենց բոլոր խորհուրդներով:  
Գահազրկեց արքաները եւ  
բարձրացուց խոնարհները: Անօթիները  
բարիբներով լիացուց,  
մինչ հարուստները դատարկաճեռն  
արձակեց: Պաշտպան եղաւ իր  
ծառային՝ Խրայէլի, հաւատարիմ  
մնալով իր ողորմութեան, ինչպէս  
որ խոստացած էր մեր հայրերուն՝  
Աբրահամի եւ անոր զաւակներուն»:

**Մարիամ եղիսաբէթի մօտ շուրջ**  
**երեք ամիս մնալէ ետք վերադարձաւ**  
**իր տունը:**

Հոգեւազատեան  
Զեր արքանագրութիւնները  
Անօրօք Կատարեթէք Կաղուելով  
Եկեղեցիոյ Դիմաւածուն՝  
514 331 5445 x202 թիւն

Սոյն թերթիւնը  
շարաթական Հերթականութեամբ  
Ե-ՆԱԽԱԿՈՎ ԱՏԱՆԱԼՈՒ ՀԱՅԱՐ ԳՐԵԹԵՔ  
eglide@sourphagop.net Ե-ՀԱՍՑԵՒՆ:

Այժեկէ՛ք Եկեղեցիոյ  
Դրաստետրի էջը  
եւ Զեր Հաւասութիւն յայտնեթէք  
(like).  
[www.facebook.com/SourpHagopChurchMontreal](http://www.facebook.com/SourpHagopChurchMontreal)

Այժեկէ՛ք  
Ս. Յակոբ Առաքորդաւան Մայր  
Եկեղեցիոյ Կայքէջ՝  
[www.sourphagop.net](http://www.sourphagop.net)

Այժեկէ՛ք  
Ս. Յակոբ Առաքորդաւան Մայր  
Եկեղեցիոյ YouTube Կայսեր՝  
Փատուլով  
Sourp Hagop Armenian Church